

Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-065-11.07.2017-ՏՀ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 42-րդ հոդվածի վերնագիրը և առաջին մասը «բացի» բառից հետո լրացնել «սննդամթերքի անվտանգության ոլորտի և» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 158-րդ հոդվածում կատարել հետևյալ լրացումները՝

1) 158-րդ հոդվածի հինգերորդ և վեցերորդ մասերը՝ «չապահովելը» բառից հետո լրացնել «բացառությամբ սույն հոդվածի երեսունհինգերորդ մասով սահմանված դեպքերի՝» բառերով.

2) 158-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ երեսունհինգերորդ մասով.

«Սննդամթերքի անվտանգության ապահովման ոլորտի նորմատիվ իրավական ակտերով սահմանված սանիտարահիգիենիկ պահանջներին չհամապատասխանող առևտուր և (կամ) հանրային սննդի ծառայություն իրականացնելը՝

առաջացնում է խախտումը վերացնելու վերաբերյալ հանձնարարականի հայտնում և տուգանքի նշանակում պաշտոնատար անձի, կազմակերպչի (պատասխանատու անձ) նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչև երեսնապատիկի չափով:»:

Հոդված 3. 238²-րդ հոդվածի առաջին մասի «և երեսուներորդ» բառերը փոխարինել «, երեսուներորդ և երեսունհինգերորդ» բառերով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 42-րդ հոդվածի վերնագիրը և առաջին մասը «բացի» բառից հետո լրացնել «սննդամթերքի անվտանգության ոլորտի և» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 158-րդ հոդվածում կատարել հետևյալ լրացումները՝

1)–158-րդ հոդվածի հինգերորդ և վեցերորդ մասերը՝ «չապահովելը» բառից հետո լրացնել «բացառությամբ սույն հոդվածի երեսունհինգերորդ մասով սահմանված դեպքերի՝» բառերով:÷

2)– 158-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ երեսունհինգերորդ մասով.

«Սննդամթերքի անվտանգության ապահովման ոլորտի նորմատիվ իրավական ակտերով սահմանված սանիտարահիգիենիկ պահանջներին չհամապատասխանող առևտուր և (կամ) հանրային սննդի ծառայություն իրականացնելը՝

առաջացնում է խախտումը վերացնելու վերաբերյալ հանձնարարականի հայտնում և ~~առաջացնում է~~ տուգանքի նշանակում պաշտոնատար անձի, կազմակերպչի (պատասխանատու անձ) նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչև երեսնապատիկի չափով:»:

Հոդված 3. 238²-րդ հոդվածի առաջին մասի «և երեսուներորդ» բառերը փոխարինել «, երեսուներորդ և երեսունհինգերորդ» բառերով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առաջարկության հեղինակը	Նախագծի հոդվածը, կետը, մասը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկության բովանդակությունը	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	2.	3.	4.	5.
<p align="center">ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր</p> <p align="center">Սերգեյ Բագրատյան</p>	<p>1. Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մաս</p>	<p>1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 158-րդ հոդվածի 35-րդ մասի սանկցիան շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>առաջացնում է նախազգուշացում և խախտումը վերացնելու հանձնարարականի հայտնում պաշտոնատար անձին,</p>	<p>1.Առաջարկությունն ընդունվել է մասնակի, քանի որ սննդամթերքի անվտանգության ապահովման ոլորտի նորմատիվ իրավական ակտերով սահմանված սանիտարա-հիգիենիկ պահանջների չպահպանումը կարող է առաջացնել վտանգ մարդու կյանքի և առողջության, այդ թվում՝ խոցելի խումբ համարվող մանկահասակ երեխաների</p>	<p>Ընդունվել է ՀՀ կառավարության դիրքորոշումը:</p>

		<p>կազմակերպչին (պատասխանատու անձ):</p> <p>2. Հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 36-րդ մասով. «Մենդամթերքի անվտանգության օրենս-</p>	<p>համար:</p> <p>Նման իրավախախտման համար վարչական պատասխանատվության միջոց որպես տույժի տեսակ նախազգուշացում կիրառելը դիտվում է որպես մեղմ մոտեցում և կարող է հանգեցնել տնտեսավարող սուբյեկտի կողմից հարցին ոչ լուրջ մոտեցման, ինչ վերաբերում է խախտումը վերացնելու հանձնարարականի հայտնելու մասին առաջարկությանը, ապա ընդունելի է:</p> <p>2. Առաջարկությունը չի ընդունվել, քանի որ օրենսգրքի 182¹-ին հոդվածով պատասխանատվություն է սահմանված ստուգումներ իրականացնող պետական մարմինների աշխատանքին խոչընդոտելու, 182²-րդ հոդվածով՝ սննդամթերքի անվտանգության բնագավառում դիտարկումներ իրականացնող անձանց պահանջները չկատարելու և դիտարկումների ընթացքին խոչըն-</p>	
--	--	--	--	--

	<p>2. Օրենսգրքի 158-րդ հոդված</p>	<p>դրության պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողություն իրականացնող պետական լիազոր մարմնի հանձնարարականը չկատարելը առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի, կազմակերպչի (պատասխանատու անձ) նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչև երեսնապատիկի չափով:»:</p>	<p>դոտելու համար, 188-րդ հոդվածի 4-րդ մասով՝ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին արտադրանքի և ծառայությունների համապատասխանության պետական վերահսկողություն իրականացնող և Հայաստանի Հանրապետության չափումների միասնականության ապահովման վերահսկողություն իրականացնող մարմնի ղեկավարի կամ ծառայողի կարգադրագրերը սահմանված ժամկետում չկատարելու համար, հետևաբար 158-րդ հոդվածը 36-րդ մասով լրացնելու անհրաժեշտությունը բացակայում է:</p>	<p>Ընդունվել է ՀՀ կառավարության դիրքորոշումը:</p>
<p>ՀՀ կառավարություն</p>	<p>2-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետեր</p>	<p>Կետերի համարակալումը համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի դրույթներին:</p>	<p>Առաջարկությունն ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>	<p>Ընդունվել է:</p>